ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/93

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2023 թ. N 93

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝	Սուրբ Մ. Խորենացի փ. ½, Վաղարշապատ 1101, Վաղարշապատ, Արմավիր, Հայաստան
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ. դեկտեմբերի 26-ին քննարկեց «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԷՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	13 հունվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում	31 մարտի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	18-21 մայիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	31 հուլիսի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	15 սեպտեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», գնահատվել են անբավարար:**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԷՊՔ-ում իրականացվող 9 կրթական ծրագրերը համահունչ են ՈԱՇ-ին, քոլեջի առաքելությանը և միտված են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարմանը: ԷՊՔ-ի ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են ՀՀ-ի քոլեջների նմանատիպ կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ներքին շարժունությանը:

Իրականացվել են ՄԿԾ-ների մշտադիտարկումներ և բարելավումներ, հաշվի առնելով ներքին շահակիցների վեր հանված կարիքները:

Քոլեջում կիրառվող դասավանդման մեթոդների մեծ մասը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, գործուն քայլեր են իրականացվում գնահատման գործընթացը բարելավելու ուղղությամբ: Պրակտիկաների բազաները ըստ մասնագիտությունների բազմազանեցվել են:

ԷՊՔ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, արդյունավետ գործող դասախոսների ընտրության մրցութային կարգ: Քոլեջի դասավանդողների մեծ մասն հիմնական աշխատողներ են: Վերջին տարիներին ներգրավվել են պրակտիկ դաշտից դասախոսներ: Անձնակազմը համալրված է երիտասարդ և մասնագիտական ներուժ ունեցող կադրերով: Իրականացվում են դասախոսների գնահատման արդյունավետ մեխանիզմներ: Քոլեջը կարևորում է դասախոսների մասնագիտական որակների բարձրացման գործում վերապատրաստումների անհրաժեշտությունը, սակայն մասնագիտական վերապատրաստումներ դեռ չի իրականացրել:

ԷՊՔ-ի շենքի ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, բարձր է շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը: Ուսանողների թվաքանակի ավելացումանը զուգընթաց անվտանգության տեսանկյունից անհանգստացնող է շենքի ծանրաբեռնվածությունը: Քոլեջը գործադրում է ջանքեր շենքային պայմանների բարելավման համար, սակայն ֆինանսական ռեսուրսների և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրները բացակայում են: :
Շենքային պայմաններից ելնելով՝ քոլեջը չունի հնարավորություն տարածաշրջանում պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների իրականացման: Քոլեջը նյութական և ուսումնառության ռեսուրսներրի կարիք ունի, ռեսուրսատար ՄԿԾ-ներն ապահովված չեն համապատասխան լաբորատորիաներով, սարքավորումներով, նյութական ռեսուրսներով: Դրան զուգահեռ՝ քոլեջը գործընկեր-գործատուների հետ չի իրականացնում ռեսուրսների համատեղ կիրառման քաղաքականություն:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

ԷՊՔ-ն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և աշխատաշուկայի կարիքների բավարարմանը միտված առաքելություն: Հստակ գնահատել է իր գործունեության առաջնային հիմնախնդիրները, կարճ ժամկետում ձեռնամուխ եղել ներքին, արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործիքների մշակմանն ու կիրառմանը:
ԷՊՔ-ում առկա են ռազմավարական կառավարման խնդիրներ՝ քոլեջի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները համադրելի չեն, մշակված չեն երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները: Շեշտադրված չեն վերհանված հիմնավոր խնդիրների ամփոփման և առաջիկա պլաններում ներառման գործիքները: Ներդրված չէ քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կառավարման համակարգը: Դասախոսներն ու ուսանողները, որպես անմիջական շահառուներ, նախաձեռնող մասնակցություն չունեն իրենց առնչվող որոշումների կայացմանը:
Քոլեջի կառավարման մակարդակում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը դեռևս պլանավորում-իրականացում փուլում է:

Որակի ներքին ապահովման գործընթացները քոլեջում մեկնարկել են 2022 թվականից: Կարճ ժամանակահատվածում ՈՆԱ գործընթացների համակարգման և ուղղորդման նպատակով ձևավորվել է փաստաթղթային և գործառնական հենքը: 2023-2028 թթ. նոր ՌԾ-ում ևս ՈՆԱ բարելավումը դիտարկվում է ռազմավարական առաջնահերթություն: Ներքին շահակիցները հնարավորինս ներգրավված են ՈՆԱ գործընթացներում: Ներքին շահակիցներից ուսանողները կամավորության սկզբունքով ներգրավվել են հարցումների իրականացման խմբերում՝ ձևավորելով որակի ապահովման ուսանողական համայնք: Իսկ արտաքին շահակիցների ներգավվածութունն այդքան էլ շոշափելի չէ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:***

ԷՊՔ-ն ունի դիմորդների հավաքագրման կազմակերպված գործընթաց, որի արդյունքում տարեցտարի ավելացել է ուսանողների թիվը: Քոլեջի կարիերայի կենտրոնի կողմից իրականացվում

են աշխատանքներ գործընկերային հարաբերությունների ստեղծման, դասընթացների և մասնագիտական շրջայցերի կազմակերպման առումով, որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը:

ՌԾ-ով սահմանված չեն հետազոտության ոլորտում քոլեջի առաջնահերթություններն ու հետաքրքրությունները, առկա չէ հետազոտության զարգացմանը միտված քաղաքականություն, դրանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ:
Առանձնացված և դասակարգված չեն հետազոտական կարողություններ և ստեղծագործական հմտություններ ձևավորող բաղադրիչ պարունակող առաջադրանքները, կուրսային ու նախագծային աշխատանքները: Ընդհանուր առմամբ քոլեջում դասախոսական կազմի շրջանում հետազոտական բնույթի աշխատանքներ չեն իրականացվում:

ԷՊՔ-ն ունի ներդրված ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Առկա են քոլեջի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունն ապահովելու ակտիվ մեխանիզմներ: Գործում են նաև հետադարձ կապի ապահովմանը նպաստող մեխանիզմները: Հասարակությանը գիտելիք փոխանցելու նպատակով քոլեջն պարբերաբար իրականացնում է տարբեր լրացուցիչ կարճաժամկետ ծրագրեր, որոնք հաստատությանը բերել են լրացուցիչ եկամուտ:

ԷՊՔ-ն արտաքին քաղաքականության իրականացման համատեքստում որդեգրել է արտաքին համագործակցութուններ և արտաքին շահակիցների շարունակական ավելացման մոտեցում: Քոլեջը համագործակցում է Վաղարշապատի պետական և մասնավոր տարատեսակ կազմակերպությունների հետ, որի արդյունքում ամրապնդվել է քոլեջ-գործատու փոխգործակցությունը:
Վերջին երեք տարիներին ավելացել է քոլեջի գործընկեր կազմակերպությունների թիվը, կնքվել են պայմանագրեր, հուշագրեր, որոնց շրջանակում ավելացել են պրակտիկաների բազաները: Թեև միջազգային կառույցների հետ համագործակցության շոշափելի արդյունքներ դեռ առկա չեն, սակայն ԷՊՔ-ն որոշակի քայլեր է ձեռնարկել, մասնակցելու միջին մասնագիտական ոլորտին համապատասխան միջազգային նախաձեռնություններին: Կարևորվում է ուսանողների և աշխատակազմի շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր

և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ռազմավարական ծրագրի գնահատման գործուն մեխանիզմների ներդրմանը,
   - ՌԾ-ի գնահատաման մեխանիզմների հստակեցմանը և ներդրմանը,
   - բոլոր մասնագիտություններում գործնական հմտություններ և կարողություններ ձևավորող, հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքների և աշխատանքների ներդրմանը,
   - գնահատման համակարգի բարելավմանը՝ կարևորելով գործնական հմտությունների գնահատումը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը,
   - ՄԿԾ-ների բարելավման գործում արտաքին շահակիցների ներգրավումը խրախուսող մեխանիզմների բարելավմանը,
   - դասախոսների մասնագիտական զարգացման միջոցառումների կազմակերպմանը՝ հիմնված բացահայտված կարիքների վրա,
   - որակի մշակույթի շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական գործարկմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. դեկտեմբերի 26
ք.Երևան